



ԱՂԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱՂԳԱՅԻՆ ԱՅՄԱՆ ՀԵՏԱՂՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համաշխարհային ֆինանսական շուկաների զարգացումները
Ամսական տեսությամբ
(Հոկտեմբեր 2017թ)



Հարգելի այցելու,

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներկայացված Ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների ամսական տեսությունը հրապարակվում է ամսական հաճախականությամբ և իրենից ներկայացնում է ՀՀ ֆինանսական շուկաներում իրականացված գործարքների ամփոփ վերլուծություն: Այն իր մեջ

պարունակում համաշխարհային ապրանքային և ֆինանսական շուկաներում տեղի ունեցած գործընթացների ու միտումների ամփոփ տեղեկատվություն. ՀՀ մակրոտնտեսական հիմնական ամսական ցուցանիշների դիտարկում. ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության ընթացքում իրականացված գործառնությունների վերաբերյալ, ինչպես նաև պետական, կորպորատիվ արժեթղթերի շուկաների և միջբանկային շուկաներում կնքված գործարքների վերաբերյալ ամփոփ վերլուծություն:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից համաշխարհային ֆինանսական շուկաների զարգացումների վերլուծության նպատակը այս շուկաներում տեղի ունեցող գործընթացները տեսանելի դաշտում պահելն ու դրանց ազդեցությունը ՀՀ եվրոպարտատոմսերի, ՀՀ ներքին ֆինանսական շուկայի և ընդհանրապես՝ երկրի մակրոտնտեսական վիճակի վրա հասկանալն է, ինչը, նկատի ունենալով ազդեցությունների լազային(ժամանակային առումով խզված) բնույթը, կարևոր է մեր տնտեսության համար ապագա զարգացումների կանխատեսման տեսանկյունից: Մյուս կողմից՝ համաշխարհային կապիտալի շուկաներում ներդրողներ են նաև ՀՀ սուբյեկտները(ԿԲ, կենսաթոշակային ֆոնդեր, այլ ինստիտուտներ և անհատներ), ինչը ևս կարևոր է դարձնում այստեղ ընթացող զարգացումների վերլուծությունը: Այս՝ ամսական պարբերականությամբ հրապարակվող տեսությունը ամփոփում է ՀՀ եվրոպարտատոմսերի, համաշխարհային ապրանքային(մետաղներ, էներգակիրներ, պարենային ապրանքներ), արժույթային(դոլարի ինդեքս, եվրո, ՌԴ ռուբլի) և կապիտալի(զարգացող և զարգացած երկրների ֆոնդային ինդեքսներ և պետական պարտատոմսերի եկամտաբերություններ) շուկաներում տեղի ունեցող զարգացումների վերլուծությունը: Ամսական տեսությունը հիմնվում է Investing.com հարթակի հրապարակած վիճակագրության վրա, իսկ վերլուծությունների հիմքում Reuters գործակալության տեղեկատվական ու վերլուծական հրապարակումներն են և սեփական դիտարկումները: ՀՀ սոցյալ տնտեսական վիճակի հետ կապված հիմնական ցուցանիշների ներկայացումը նպատակ ունի ներկայացնել ՀՀ տնտեսական ակտիվության, տնտեսության հիմնական ճյուղերի զարգացումների, սպառողական և արդյունաբերական գների ինդեքսների, արտաքին ապրանքաշրջանառության և բնակչության միջին ամսական աշխատավարձերի ընդհանուր միտումները, ինչը թույլ է տալիս գնահատել Ֆինանսական շուկաների վրա մակրոտնտեսական և սոցյալ-տնտեսական ընդհանուր վիճակի ազդեցությունները: ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության շրջանակներում ներկայացված են ԿԲ կողմից կիրառվող անուղղակի գործիքների կիրառումը, դրանց շրջանակներում իրականացված գործարքները, ինչպես նաև դրամական զանգվածի կառուցվածքը և դրանում իրականացվող փոփոխությունները: ՀՀ արտարժույթի շուկայի հետ կապված ներկայացված են ԱՄՆ դոլարի, եվրոյի, ՌԴ ռուբլու բորսայական, արտաբորսայական, ներբանկային և միջբանկային գործարքները, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի շուկայում իրականացված գործառնությունները: Արժեթղթերի շուկայի վերլուծությունը բաղկացած է պետական և կորպորատիվ

արժեթղթերի շուկաների հետ կապված դիտարկումներից: Պետական պարտատոմսերի շուկայի հետ կապված ներկայացվում են առաջնային շուկայում դրանց տեղաբաշխումները, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետգնումները, բորսայական և արտաբորսայական շուկաներում կնքվող գործարքները, գործակալ բանկերի կողմից բորսայական գնանշումները, ինչպես նաև պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերի փոփոխությունները: Կորպորատիվ արժեթղթերի շուկայի հետ կապված ներկայացվում են բորսայական և արտաբորսայական տեղաբաշխումները, բորսայական շուկայում կնքված գործարքները, դրանց շուկա ստեղծողների գնանշումները: Միջբանակային շուկայի վերլուծությունն իրենից ներկայացնում են միջբանակային վարկային, սվոփ և ռեպո շուկաների ամփոփ դիտարկումներ:

Ամբերդ հետազոտական կենտրոնի կողմից ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների վերաբերյալ հրապարակվող ամփոփագրի տեղեկատվական հիմքերն են ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական Բանկի, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ԲԲԸ հրապարակումները և վիճակագրական աղբյուրների բազաները: Ձեզ ներկայացվող վիճակագրական աղյուսակների, գծապատկերների և ներկայացվող տվյալների մի մասը նշված մարմինների կողմից օրական կտրվածքով հրապարակվող տվյալների համախմբման արդյունք են:

Սույն վիճակագրական նյութերը, վերլուծությունները և դիտարկումները ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի մտավոր սեփականությունն են և դրանցից օգտվելու դեպքում հղումը կենտրոնի կայքին պարտադիր է:



«Ամբերդ» հետազոտական կենտրոն

Երևան, Նալբանդյան 128, թիվ 3 մասնաշենք Հեռ.՝ (+37410) 593-479 Էլ. հասցե՝ info@amberd.am

Բովանդակություն

| | |
|-------------------------------------------|----|
| Ամփոփ տեսություն: | 5 |
| ՀՀ եվրոպարտադրումներ: | 6 |
| Համաշխարհային ապրանքային շուկաներ: | 8 |
| Համաշխարհային արժույթային շուկաներ: | 12 |
| Համաշխարհային կապիտալի շուկաներ: | 15 |

Ամփոփ տեսություն: 2017թ-ի հոկտեմբեր ամսին ընդհանուր առմամբ համաշխարհային շուկաներում շարունակվել է մասնակիցների «ռիսկ-ապետիտի» վերականգնումը, ինչը դրսևորվել է զարգացած երկրների ֆոնդային ինդեքսների, նավթի և պղնձի գների աճով, ոսկու և պետական պարտատոմսերի գների նվազմամբ(եկամտաբերությունների աճով):


Հոկտեմբերին շուկայում ամենակարևոր իրադարձությունը ԵԿԲ հայտարարությունն էր 2018թ-ի քանակական թուլացման քաղաքականության ուղենիշների վերաբերյալ, որն էականորեն թուլացրեց եվրոյի դիրքերը ԱՄՆ դոլարի նկատմամբ, իսկ դոլարի ինդեքսի՝ տարեսկզբից ձևավորված նվազող տրենդի ուղղությունը փոխեց դեպի վերականգնման:

ՀՀ եվրոբոնդերի եկամտաբերությունների նվազման միտումը կանգ է առել և փոխել ուղղությունը՝ փոքր տատանողականության պայմաններում:

ՀՀ Եվրոպարտատոմսեր: Հոկտեմբերին ՀՀ Եվրոպարտատոմսերի՝ նախորդ ամիսների գների աճի և եկամտաբերությունների նվազման միտումը փոխել է իր ուղղությունը՝ և՛ 2020, և՛ 2025թ-ին մարվող պարտատոմսերի դեպքում: 6% արժեկտրոնային եկամտաբերությամբ 2013թ-ին թողարկված, 2020թ-ին մարվող Եվրոպարտատոմսերի եկամտաբերությունը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 5, իսկ 7.15% արժեկտրոնային եկամտաբերությամբ 2015թ-ին թողարկված, 2025թ-ին մարվող Եվրոպարտատոմսերինը՝ 1.1%-ով: Եկամտաբերությունները 2016թ-ի հոկտեմբերի նկատմամբ նվազել են համապատասխանաբար 17.6 և 16.4 տոկոսով:

Հոկտեմբերի 27-ի դրությամբ առաջինի եկամտաբերությունը կազմել է 4, իսկ երկրորդինը՝ 5.2%:

Գծապատկեր 1 ՀՀ Եվրոպարտատոմսերի եկամտաբերությունները, 2016թ հոկտեմբեր -2017թ հոկտեմբեր




Ձևավորված ընդհանուր նվազման միտումը կարելի է բացատրել համաշխարհային շուկայում ՀՀ Եվրոպարտատոմսերի դիրքերի աստիճանական ամրապնդմամբ, որին էականորեն նպաստում է նաև երկրում պահպանվող ֆինանսական և

հարկաբյուջետային կայունությունը, և որպես արդյունք՝ միջազգային վարկանշավորողների կողմից տրված «կայուն» հեռանկարով վարկանիշները: Հոկտեմբերին, չնայած եկամտաբերությունների փոքր ինչ աճին, պահպանվել է դրանց ցածր տատանողականությունը՝ պայմանավորված նաև ընդհանուր շուկաներում դիտվող կայունությամբ: Ընդհանուր առմամբ՝ եկամտաբերությունների դինամիկան վկայում է շուկայի մասնակիցների կողմից ՀՀ «Երկրի ռիսկի» գնահատականի բարելավման մասին:

Նշենք, որ երկրի թողարկած եվրոպարտատոմսերի եկամտաբերությունը լավագույնն է արտացոլում այս ռիսկի փոփոխությունը, իսկ սեփական արժույթով պարտատոմսերի եկամտաբերությունն իր մեջ ներառում է նաև փոխարժեքի ռիսկը:

Համաշխարհային ապրանքային շուկաներ: Մետաղների շուկայում հոկտեմբեր ամսին ընդհանուր առմամբ տարբեր միտումներ են դրսևորվել: Ոսկու գներն ընկել են 1.1, իսկ պղնձինը աճել 5.2 տոկոսով:




Ոսկին հոկտեմբերի սկզբի մի քանի առևտրային նստաշրջաններին շարունակեց նվազել նախորդ ամսվա գնի անկման իներցիայի տակ, այնուհետև կտրուկ աճեց մինչև ամսվա կեսեր՝ պայմանավորված 2 խումբ գործոններով: Առաջինը գեոքաղաքական ռիսկերն են(ԱՄՆ – Հյուսիսային Կորեա նոր սրումների ռիսկ՝ Թրամփի հայտարարություններից հետո), և երկրորդը՝ ԱՄՆ-ում սպասվածից ցածր ինֆլյացիան, հետևաբար՝ դեկտեմբերին փոկոսադրույքների բարձրացման հավանականության, սպասվող փոկոսադրույքների և ոսկին պահելու այլընտրանքային ծախսերի նվազումը:

Ամսվա երկրորդ կեսին ոսկին շարունակեց նվազել՝ Թրամփի հարկային բարեփոխումների սպասումներով և ԱՄՆ-ում տնտեսական աճի տեմպերի արագացմամբ պայմանավորված:

Ընդհանուր առմամբ՝ հիմնարարները վերջին ամիսներին ոսկին մտցրել են «ածող միջանցք», որում գինը տատանվում է գեոքաղաքական ռիսկերի փոփոխվող գնահատականներով և ԱՄՆ-ում ԴՊՀ քաղաքականության սպասումներով պայմանավորված:

Պղնձի գներն ամսվա ընթացքում ամբողջությամբ վերականգնել են նախորդ ամսվա կորուստները՝ հոկտեմբերի առաջին կեսին աճելով գրեթե 10 տոկոսով: Աճի դրայվերը Չինաստանի՝ սպասումները գերազանցած մակրո ցուցանիշներն էին, որին աշխարհում բաժին է ընկնում պղնձի սպառման կեսից ավելին: Այսպես, Ճինաստանի արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը կազմել է 7.6 տոկոս, երբ սպասվում էր միջինում 6.5 տոկոս աճ: Նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ պղնձի գնի աճը կազմում է մոտ 40 տոկոս, ինչը որոշակի ռիսկեր է ստեղծում վերջինիս ֆունդամենտալներից խզված լինելու և նոր դրական ազդակների բացակայության դեպքում դեպի հին մակարդակները շարժվելու համար:

Էներգակիրների շուկայում հոկտեմբերին նավթի գները շարունակել են աճել՝ 6.7 տոկոսով, իսկ բնական գազի գինը նվազել է 3.7 տոկոսով:




Նավթի գները հոկտեմբերի սկզբին փոքր ինչ նահանջել են, սակայն սկսած երկրորդ շաբաթից ձևավորել նախ թույլ, ապա՝ ուժեղ աճի միտում, ամսվա վերջին հատելով 1 բարելի դիմաց 60 դոլարի սահմանագիծն ու հասնելով վերջին 2 տարիների ամենաբարձր մակարդակին:

Գնի աճի դրայվերները մի քանիսն էին: Նախ՝ ամսվա ընթացքում քրդական զինյալները Իրաքում արգելափակեցին նավթային ենթակառուցվածքները, ինչն իր ազդեցությունն ունեցավ գների վրա: Երկրորդը՝ ԱՄՆ-ում նվազում են նավթի կոմերցիոն պաշարները. 4 անգամ հրապարակված ցուցանիշերից 3-ն ամսվա մեջ փաստում էին ոչ միայն պաշարների ֆիզիկապես նվազման, այլև սպասվածից ավելի արագ նվազման մասին: Երրորդը՝ ՕՊԵԿ-ն իր հրապարակումներում պնդում է, որ նավթային շուկան մոտ է հավասարակշռությանը, քանի որ վերջին ամիսների առաջարկի սառեցման ծրագիրը բավականին հաջողությամբ է ընթացնում: Եվ վերջապես չորրորդ գործոնը, որի ազդեցությամբ տեղի ունեցավ ամսվա վերջի կտրուկ աճը՝ հայտարարությունը, որ ՕՊԵԿ-ը և ոչ անդամ երկրները հավանաբար կընդլայնեն առաջարկի սառեցման գործարքը 2018թ-ի մարտից էլ ավելի երկար ժամանակով, ինչին իր պատրաստակամությունն է հայտնել միանալու Ռուսաստանը:


Բնական գազի ֆյուչերսները ամսվա ընթացքում չեն ունեցել հստակ տրենդ: Գնի փոփոխությունները հիմնականում պայմանավորված են եղել ԱՄՆ-ում էներգակիրների պահուստների փոփոխություններով, ինչպես նաև եղանակային կանխատեսումներով:

Պարենային շուկայում շաքարավազի գինը փոքր ինչ վերականգնվել է, հոկտեմբերին աճելով 6.1 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ 34 տոկոս անկման դիմաց, իսկ **ցորենի գինը նախորդ ամսին տեղի ունեցած աճից հետո սեպտեմբերին նվազել է 3.4 տոկոսով**: Վերջին տարում շաքարավազի գների անկումը պայմանավորված է Բրազիլիայում բերքի կտրուկ աճով, որ 2017թ-ին համաշխարհային շուկայում ավելցուկ է առաջացրել:

Գծապատկեր 6. Շաքարավազի գների դինամիկան, 1 տոննային դիմաց ԱՄՆ դոլար, Լոնդոն



Գծապատկեր 7. Ցորենի գների դինամիկան, 1 տոննային դիմաց ԱՄՆ դոլար, Լոնդոն




Համաշխարհային արժույթային շուկաներ: Հոկտեմբերին շարունակվել է դոլարի՝ նախորդ ամիս սկսված վերականգնումը՝ տարեսկզբից տեղի ունեցող թուլացումից հետո: Հոկտեմբերին դոլարի ինդեքսը աճել է 1.6 տոկոսով՝ տարեսկզբից տեղի ունեցած 8.5 տոկոս անկման դիմաց:

Գծապատկեր 8. Դոլարի ինդեքսի՝ դինամիկան



Հոկտեմբերին եվրոն շարունակել է նախորդ ամսվա կոռեկցիան տարեսկզբից տեղի ունեցող աճից հետո՝ նվազելով 1.4 տոկոսով: Ռուսական ռուբլին հիմնականում պահպանվել է նախորդ ամիս գրանցված մակարդակների շուրջ, իսկ ամսվա արդյունքներով դոլարի նկատմամբ թուլացել 1.5 տոկոսով:

¹ Դոլարի ինդեքսը(DXY) արտարժույթային զամբյուղի նկատմամբ ԱՄՆ դոլարի հարաբերական արժեքի չափն է: Զամբյուղի մեջ ներառված են եվրոն(կշիռը՝ 57.6%), ճապոնական իենը(13.6%), ֆունտ ստեռլինգը(11.9%), կանադական դոլարը(9.1%), շվեդական կրոնը(4.2%) և շվեյցարական ֆրանկը(3.6%):



Եվրոն ամսվա առաջին տասնօրյակում դոլարի նկատմամբ շարունակում էր թուլացնել դիրքերը՝ պայմանավորված ԵԿԲ քաղաքականության սպասումներով, ԱՄՆ տնտեսությունում գրանցված դրական ցուցանիշներով և Կատալոնիայում տեղի ունեցող զարգացումներով:


Ամսի 10-ից հետո եվրոն աստիճանաբար նվազում էր, իսկ երրորդ տասնօրյակում կտրուկ անկում ապրեց: Պատճառները մի քանիսն էին. ԱՄՆ հարկային նոր փաթեթի ընթացքը, գեոքաղաքական զարգացումները, ԴՊՀ և ԵԿԲ քաղաքականությունները:

Սակայն հիմնական գործոնը, որը տարեսկզբից վեր էր հրել եվրոն ավելի քան 13 տոկոսով, իսկ վերջին երկու ամիսների կոռեկցիայի ենթարկել գինը վերջինս է՝ ԵԿԲ քաղաքականությունը, իսկ ավելի ճիշտ դրա սպասումների ուղին:


Հոկտեմբերի 25-ին ԵԿԲ-ն կրկին նոր ինֆորմացիոն ազդակներ տվեց շուկայի մյուս տարում քանականան թուլացման քաղաքականության ընթացքի վերաբերալ: Ըստ ամենայնի՝ 2018թ-ին ԵԿԲ-ն շուկայից ամսական կթիրախավորի գնել 30 մլրդ եվրո՝ ներկայիս 60 մլրդ-ի դիմաց: Սակայն ծրագրի ժամկետը կարող է երկարացվել մինչև սեպտեմբեր: Հայտարարությունը եվրոն իջեցրեց մինչև 1.16 կետի մակարդակի՝ երկու օրում նվազեցնելով 1.8 տոկոսով:

Ռուբլին ամսվա առաջին կեսին դոլարի նկատմամբ ամրապնդել է դիրքերը՝ հասնելով 57 ռուբլի 1 դոլարի դիմաց մակարդակին: Այս աճը օժանդակություն էր գտնում ոչ միայն նավթի գնի աճից, այլև ռուսաստանյան ֆինանսական շուկաներում ձևավորված միջավայրից: Այսպես, ՌԴ ԿԲ հիմնական տոկոսադրույքը պահպանվել է 8.5 տոկոսի մակարդակում, իսկ տարեկան ինֆլյացիան 2017 թ-ին սպասվում է 3 տոկոսի միջակայքում: Արդյունքում բարձր իրական տոկոսադրույքները գրավիչ են դարձնում ռուբլին carry trade գործարքների համար, ինչը ռուբլու համար լրացուցիչ սպեկուլյատիվ պահանջարկ է ստեղծում: Ամսվա առաջին կեսին ռուբլու աճը նաև համահունչ և կոռելացված է նավթի գնի աճի հետ:

Սակայն նավթի և ռուբլու այս կապը խզվում է ամսվա երկրորդ կեսին, երբ չնայած աճող նավթին, ռուբլին զիջում էր դիրքերը՝ ամսվա վերջին հասնելով 58.3 մակարդակի: Այս իրավիճակը պայմանավորված էր մի կողմից գրեթե բոլոր արժույթների նկատմամբ աճող դոլարի(սա, իհարկե, ներառված է նաև նավթի գնանշումներում), մյուս կողմից՝ ՌԴ նկատմամբ ամերիկյան նոր սանկցիաների վերաբերյալ սպասումներով: Արդյունքում, նավթի և ռուբլու միջև կապ գրեթե առկա չէ:



Համաշխարհային կապիտալի շուկաներ: Հոկտեմբերին զարգացած երկրների ֆոնդային շուկաներում շարունակվել են դրսևորվել գների աճի միտումներ: Ամերիկյան S&P 500 ինդեքսն աճել է 2.25, իսկ գերմանական DAX-ը՝ 3.1 տոկոսով: 2016թ-ի հոկտեմբերից S&P-ն աճել է 19.5, իսկ DAX-ը՝ 24.5%-ով:




S&P 500 ինդեքսի աճը ըստ էության նախորդ ամիսներին ձևավորված իներցիայի արդյունքն էր, ինչն օժանդակություն էր գտնում նաև ամերիկյան դրական մակրոտնտեսական ցուցանիշների հրապարակումներից և առանձին ընկերությունների շահույթի ցուցանիշներից: Բացի այդ, որքան էլ զարմանալի է, ամերիկյան արժեթղթերն աճում էին նաև հարկային նոր փաթեթի վերաբերյալ դրական տեղեկատվական ազդակներից, որոնք, թվում է, պետք է արդեն վաղուց ներառված լինեին գնանշումներում, որի ապացույցը վերջին մեկ տարում ինդեքսի վստահ աճի տրենդն է: Շուկայի աճը բխում է հիմնարարներից թե ոչ, իհարկե, ամբողջապես դժվար է

գնահատել: Սակայն ուշագրավ է, որ ամերիկյան շուկան աճում է պատմական գերցածր տատանողականության(վոլատիլության) պայմաններում(**տե՛ս Գծ. 14՝ S&P VIX**), ինչը սովորաբար համարվում է շուկայի ուղղության շրջման կետի մոտենալու նշան:

DAX-ը մինչև հոկտեմբերի վերջ անորոշ(flat) վարքագիծ էր դրսևորում, իսկ *ամսի 26-ից 30-ը կտրուկ աճեց՝ պայմանավորված ԵԿԲ նիստին հաջորդած Դրագիի հայտարարություններով, ով տվեց 2018թ-ի QE քաղաքականության հիմնական ուղենիշները*(արդեն քննարկել ենք եվրոյի դինամիկային անդրադառնալիս): Այս տեղեկատվությունը հատկապես կարևոր է բանկերի արժեթղթերի համար, որոնց «հիվանդ» ակտիվները ծրագրի շրջանակներում ԵԿԲ-ն վերցնում է իր հաշվեկշիռն, և որոնք(հատկապես գերմանական խոշորագույն՝ Deutsche Bank-ը) լուրջ խնդիրների առաջ կկանգնեն ծրագրի դադարեցումից հետո:

Սեպտեմբեր ամսին զարգացող շուկաների(Emerging markets) ֆոնդային շուկաներն ամփոփող **MSCI ինդեքսը նախ աճել, ապա որոշ կոռեկցիայի է ենթարկվել**, ամսվա արդյունքներով իր արժեքն ավելացնելով 3.5 տոկոսով: Ռուսական **MMB5-ն ևս, ընդհանուր առմամբ նման դինամիկա է ունեցել, սակայն ի տարբերություն նախորդի՝** ամսվա արդյունքերով արձանագրել է նվազում՝ 0.6 տոկոս: 2016թ-ի հոկտեմբերի նկատմամբ MSCI-ն աճել է 22.7, իսկ MMB5-ն՝ 3.9 տոկոսով:



Հոկտեմբերին ԱՄՆ պարտքային շուկայում ընդհանուր առմամբ շարունակվել են եկամտաբերությունների աճի միտումները: ԱՄՆ 10 տարի ժ.կ. պետական պարտատոմսերի եկամտաբերությունն աճել է 3.8 բազիսային կետով կամ 1.6 տոկոսով: 2016թ-ի հոկտեմբերի նկատմամբ այս պարտատոմսերի եկամտաբերությունն աճել է 48.6 տոկոսով կամ 77.7 բազիսային կետով:

Ամսվա ընթացքում 5 բազիսային կետով աճել են նույն ժամկետայնությամբ ռուսական պարտատոմսերի եկամտաբերությունները, ընդ որում՝ նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ նվազումը կազմում է 47 բ.կ.(5.8 տոկոս):

